

ԺԸ ԴԱՐԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԸ

Ա. Օ. ՍԱՀԱԿՅԱՆ

Հայկական ավանդական բժշկությունը, որը պահպանվել ու մեզ է հասել միջնադարյան բժշկապետների գիտական աշխատություններում, իր վերելքն ապրեց XII—XV դդ. Մխիթար Հերացու, Ամիրգովյաթ Ամասիացու և այլոց գործերում: Հետագայում, XVI—XVIII դդ., նրա ավանդույթները շարանակում էին զարգանալ Արևմտյան ու Արևելյան Հայաստանի մի շարք բժշկական կենտրոններում, որոնցից աչքի են ընկնում Փոքր Հայքի բժշկանոցները: Թեպետ XVIII դարում հանդես են գալիս նշանավոր հայ բժիշկներ, որոնք իրենց կրթությունը ստացել էին Եվրոպայի և Ռուսաստանի համալսարաններում, սակայն նույնիսկ նրանց ստեղծագործություններում դեռ առկա էր հին ավանդական բժշկության ոգին: XVIII դարից մեզ հասած բժշկարաններից առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում «Պողոսի բժշկարանը» (Մաշտոցի անվ. մատենադարան, ձեռ. № 2739)², որը ավանդական հայկական բժշկության վերջին կոթողներից է: Բժշկարանի մանրամասն նկարագրությունը որպես հավելված տրվում է վերջում:

Ժամանակին անվանի հայ բժշկապատմաբան Լ. Հովհաննիսյանն իր «Բժշկության պատմությունը Հայաստանում» երկասիրության երրորդ հատորում համառոտակի անդրադարձել է այս գործին՝ բնութագրելով այն որպես «չանասիրաբար և մանրամասնորեն մշակված զուտ կոմպիլյատիվ ըստեղծագործություն»³: Սրանից հետո համարյա կես դար «Պողոսի բժշկարանը» մնացել է ստվերում՝ կարոտ լուրջ գիտական հետազոտության: Մինչդեռ հանրագիտարանային բնույթի բժշկական գործերի շարքում այն իր ուրույն տեղն ունի հանձինս «Ստածման» և «Ախրապատին» գրքերի, որոնցում ամփոփված են ոչ միայն հին ավանդական բժշկության փորձը, այլև մասնավորապես Փոքր Հայքի բժշկանոցների ու իր սեփական գիտելիքները: XVIII դարի ավանդական բժշկության այս ինքնատիպ հուշարձանի բազմակողմանի ուսումնասիրությունը, հուսով ենք, լույս կսփռի ինչպես մահճարուժության, դեղագիտության, բուսաբուժության, այնպես էլ աղբյուրագիտության ու բժշկական տերմինաբանության կարևոր հարցերի վրա: Ինչպես ժամանակին Ամասիացին, Պողոս բժիշկն իր առաջ էր դրել մի գերխնդիր՝ ստեղծել «խիստ հարուստ գիրք մի», որպեսզի բժշկական արվեստով զբաղվող անձնավորությունը այլևս «այլ գրքի կարօտ չի լինի»⁴: Ուստի խոսքը

¹ Տե՛ս Ա. Վարդանյան, Բժիշկ Պետրոս Քալանթարյանը և XVIII դարի հայ բժշկագիտության մի քանի հարցեր, «Պատմա-բանասիրական հանդես», 1986, № 2, էջ 139—148:

² Օ. Եզանյան, Ա. Զեպունյան, Փ. Անթարյան, Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվ. մատենադարանի, Բ. Ա, Երևան, 1965, էջ 865:

³ Л. Оганесян. История медицины в Армении, т. 3, Ереван, 1946, с. 155.

⁴ Մաշտոցի անվ. մատենադարան (այսուհետև՝ Մ. Մ.), ձեռ. № 2739, էջ 107ա:

հանրագիտարանային բնույթի գործի մասին է: Այս մասին է վկայում նաև հեղինակի հետևյալ հիշատակարանը. «Ուրիշ գրքերն լման շին գրեր, թէ գիրքն մեծ և ծանտր կու լինի: Բայց ես՝ Խուլիճանի որդի տիրացու հէքիմ Պողոսըս լրման գրեցի կատարելապէս հայոց, ֆռանկաց կամ տաճկացմէն, որ քան զայս աւելի բան չկայ»⁵: Ձեռագրի տարբեր էջերում կոնկրետ հիվանդութիւնների նկարագրութեան և դեղագրերի մեջ գտնում ենք տվյալներ, որոնք վկայում են Պողոս բժշկի փորձառու գործունեութեան մասին: Այսպես օրինակ. «Մահտեսի Խուլիճանի որդի Պողոսն ասէ, թէ ես փորձեցի այսպէս, պօղազն որ ծակած լինի...»⁶: «Տիրացու Պողոսն ասէ, թէ ես զայս մէհլամիս զօրութիւն տեսայ»⁷: «Խուլիճանի որդի տիրացու Պողոսին սահմանածն է և իր բանեցուցածն է և փորձածն է»⁸ և այլն:

Ո՞վ է Պողոս բժիշկը: Առաջին աղբյուրը «Խարբերոցի տիրացու Պողոսի» վերաբերյալ քաղում ենք իր իսկ պատվիրած ձեռագրից: Ձեռագրի տարբեր հիշատակարաններում և դեղագրերի մեջ անգամ նա խոսում է իր մասին: հիշում իր ուսուցիչներին, պատվերներ տալիս աշակերտներին: Ստորև կարդում ենք. «Եւ ես Խուլիճանի որդի տիրացու Պողոս, որ եկի ի քաղաքս Յեղոկիա, որ է Թոխոթ, և էր թիւն ԻժՂՁ (1747)-ն և սկսայ զայս գիրքս գրել տալ և շատ կեանք մաշեցի և աշից լոյս թափեցի զայս գրքին համար...»⁹: Դեղագրերում որոշ տեղեկութիւններ ենք քաղում նաև իր ուսուցիչի մասին. «Զայս արայ, որպէս կու անէր իմ վարպետը՝ Մարսովցի էմին օղլի Դաւիթն»: Այսպիսով, մեր առջև ուրվագծվում է ԺԼ դարի բժշկապետ Պողոսի պատկերը, որի ծննդավայրը եղել է Խարբերոց, ուսումը շարունակել է, հավանաբար, Մարզվանում, իր ուսուցիչ՝ էմինի որդի Դաւիթի մոտ: Գալով Եվդոկիա, որն այդ ժամանակներում ճանաչված բժշկական կենտրոն էր¹⁰, գտնում է հարուստ գրադարան և փորձառու գրիչներին՝ Հակոբին ու Զաքարիային, որոնց էլ պատվիրում է սույն բժշկարանը: Գրիչի՝ Հակոբ դպիրի և ձեռագրի ավարտի մասին տեղեկութիւններ ենք ստանում բժշկարանի գլխավոր հիշատակարանից. «Արդ գրեցաւ բժշկարանս այս ի թուաբերութեանս մերում տօմարի երկշրջանի, երկյոբերենի և եմետասանի (1748), ի յամսեանն յուլիսի ԺԴ (14), աւուրն Ե (5) շարթի Զ (6) ժամուն, որ արեգակն խաւարեցաւ և աստեղքն երեկեցան: Ի սոյն աւուրն զրաւ եղև գրոյս ի քաղաքս Թոխոթ, ընդ հովանեաւ Սրբոց Խ (40) Մանկանցն, ձեռամբ տիրացու Աւիտիքի որդի, մեղաւոր և ամենաթշուառ սուտանուն Յակոբ դպրորի»¹¹: Սույն հիշատակարանում տեղեկութիւններ ենք ստանում նաև ձեռագրի առաջին գրիչ՝ Զաքարիայի մասին: «Նաև առաջին գրողն գրքիս տիրացու Զաքարիայն այլ յիշեցէք, որ նա ևս առաջ Ա (1) քանի տետր գրած էր, մնացեալն մեք աւարտեցաք»¹²— նշում է Հակոբ գրիչը: Զաքարիան նաև այս ձեռագրի կազմողն էր: Կազմի շրջանակի եզրերի Ա և Բ փեղկերին զբողմված է հնգական փակագիր՝ «Զաքար Տ[իրացու]»: Մատենադարանում է պահվում նաև «Թիֆլիզցի պարոն Պետրէի» պատվերով 1748 թ. Եվդոկիայում գրված Ամիրդովլաթ Ամասիացու «Անգիտաց անպէտը» ձեռամբ մե-

⁵ Նույն տեղում, էջ 102բ:

⁶ Նույն տեղում, էջ 208ա:

⁷ Նույն տեղում, էջ 224ա:

⁸ Նույն տեղում, էջ 226ա:

⁹ Մ. Մ., ձեռ. № 2739, էջ 294ա:

¹⁰ Ս. Վարդանյան, Նոր տվյալներ միջնադարյան հայկական բժշկական կենտրոնների մասին (տե՛ս հաջորդ համարը):

¹¹ Մ. Մ., ձեռ. № 2739, էջ 353ա:

¹² Նույն տեղում, էջ 353ա:

դապարտ և անարժան և նուստ ծառայիս Աստուծոյ, յըրզնկացի տէր Խաչատուրենց Մինասի որդի տրուպ տիրացու Զագարիայիս»¹³ հիշատակարանով, որը վկայում է Եվդոկիայի բժշկանոցի ակտիվ գործունեություն մասին: Ցավոք, Եվդոկիայի դերը, իբրև ավանդական հայկական բժշկության կարևոր կենտրոնի, առասուրանտեսվում է հայկական բժշկության պատմության հարցերին նվիրված մենագրություններում: Մինչդեռ Եվդոկիան միջին դարերում և նույնիսկ ավելի վաղ շրջանում սերտ կապեր է ունեցել Փոքրը Հայքի այլ բժշկական կենտրոնների հետ, հատկապես Ամասիայի ու Սեբաստիայի բժշկական դպրոցների հետ, որոնց մասին գոյություն ունի հարուստ գրականություն¹⁴: Այստեղ ապրող բնիկ հայությունը մեծ դեր է խաղացել քաղաքի հասարակական ու տնտեսական կյանքում՝ շերմեռանդ սեր ցուցաբերելով հայ եկեղեցու ու մշակույթի նկատմամբ¹⁵: Այստեղ ըստեղծվել են բազմաթիվ հայկական ձեռագրեր, այդ թվում նաև բժշկարաններ, որոնցից մի մասը գտնվում է այժմ Մաշտոցի անվան մատենադարանում: ԺԶ—ԺԸ դդ. Եվդոկիայի բժշկական կենտրոնի ծաղկման շրջանն էր: Հատկապես մեծ համբավ էր վայելում նրա հիմնադիրներից մեկը՝ Արզուման բժիշկը, որի մասին մինչև այսօր հայտնի էր միայն, որ նա 1657 թ. պատվիրել է իր համար Ամիրդովլաթ Ամասիացու «Անգիտաց անպէտը»¹⁶: Պողոսն իր բժշկարանի «Խօսք ի ցան, որ կոչի ըզմաստ» խորագիրը կրող գլխում խոսելով ջրգողության մասին, նշում է, որ «սորա դեղն դժուար լինի, զի աւելի հասուկ բժիշկ պիտի», այսինքն փորձառու, վարպետ բժիշկ էր հարկավոր հիվանդության բուժման համար: Այստեղ է, որ նա մեջբերում է կատարում մեզ շհասած Արզուման բժշկի գործից. «Նշանք մի այլ քեզ ի յայս ցաւս, որ ես անարժան Արզումանս, աշակերտ Սեբաստացի Պունիաթ բժշկի և որդոյ նորա Կարապետ բժշկի, շատ աշխատանք քաշեցի և ցանկացող եղէ այս արուեստիս և տեսայ այս տէր մարդ մի, որ կուշտն ուռու...»¹⁷: Վերոհիշյալ մեջբերումից կարելի է նաև եզրակացնել, որ նա աշակերտել է Բունիաթ և Կարապետ հայր և որդի Սեբաստացիներին:

Մեծ կարևորություն ունի նաև «Պողոսի բժշկարանի» և այլ աղբյուրների ուսումնասիրության հարցը: Բժշկարանի սկզբում՝ 3ա—52բ էջերում, կա 58 գլխից բաղկացած մի աշխատություն, որը Պողոսը չի մտցրել իր գրքի ցանկի մեջ: Մեր կատարած բնագրագիտական համեմատության շնորհիվ հաջողվեց պարզել, որ խոսքը Ամիրդովլաթ Ամասիացու «Ուսումն բժշկութեան» վաղ շրջանի գործի մասին է (1459 թ.): Սակայն բժիշկ Պողոսը, ինչպես այդ հաճախ էին անում միջնադարյան հայ բժիշկները և նույնիսկ ինքը Ամիրդովլաթը, չի նշում իր օգտագործած հայկական աղբյուրները¹⁸: Երևում է, որ նա օգտվել է, իրոք, «Ուսումն բժշկութեան» գրքի նախնական բնագրից և ոչ թե նրա մշակված տարբերակից, որը տաս տարի անց կազմել է Ամասիացու «Օգուտ բժշկութեան» գրքի առաջին մասը: Պատահական չէ, որ Պողոսի բժշկարանի գլխացանկում նշված է 58 գլուխ, ինչպես «Ուսումն բժշկութեան» մեջ, և ոչ թե 15-ը, ինչպես «Օգուտ բժշկութեան» առաջին մասում: Այստեղ բացակայում է նաև դեղագիտության մասը, ինչ-

¹³ Մ. Մ., ձեռ. № 9259, էջ 333ա:

¹⁴ Տե՛ս Լ. Գոգեսյան, *История медицины в Армении*, т. 3, էջ 1—127:

Տե՛ս Ա. Ավոյաճեան, Պատմութիւն Եւդոկիոյ Հաղոց, Գահիրէ, 1952, էջ 1019—1622:

¹⁵ Տե՛ս Լ. Գոգեսյան, *История медицины в Армении*, т. 3, էջ 134:

¹⁷ Մ. Մ., ձեռ. № 2739, էջ 152ա:

¹⁸ Ս. Վարդանյան, Ամիրդովլաթ Ամասիացու հայկական աղբյուրները, «Պատմա-քաղաքագիտական հանդես», 1994, № 1—2, էջ 209—224:

պես նաև «Մարդակազմութիւն մի այլ գրոցն» հատվածը, որը Բունիաթ Սե-
բաստացին հետագայում «Օգուտ բժշկութեան» գիրքը խմբագրելիս ներմու-
ծել է Ամիրդովլաթի բժշկարանի մեջ: Ամենայն հավանականությամբ Պո-
ղոսն օգտվել է «Ուսումն բժշկութեան» Ամասիացու ինքնագրից (Մատենա-
դարանի ձեռ. № 8871) կամ էլ նրա ուշ շրջանի գրչագրերից: Դրա մասին է
վկայում նաև հետևյալ փաստը. Պողոսի բժշկարանի վերջում զետեղված է
ղեղագիտական մի նյութ՝ «Վասն բառի ամենայն ղեղոց Զ լեզուաւ», որը
կազմում է բժշկարանի ԾԿԶ գլուխը: Վերջինս իրենից ներկայացնում է Ամա-
սիացու առաջին «Ախրապատինի» ԻԳ գլուխը, որը նույնպես հայտնի է «Դե-
ղերու զօրութիւն» կամ «Աղյուսակաձև բառարան» անվան տակ: Իսկ առա-
ջին «Ախրապատինը», ինչպես և «Ուսումն բժշկութեան» գիրքը զետեղված
են № 8871 ձեռագրում, որը, հավանաբար, ձեռքի տակ ունեցել է Պողոսը:
ԺԸ դարի բժիշկը քաջածանոթ է եղել ոչ միայն Ամասիայի, այլ նաև Սե-
բաստիայի բժշկական դպրոցի գիտական ժառանգությանը: Այսպես, օրի-
նակ, իր բժշկարանի 53ա—81բ էջերում զետեղված է «Ըստածումն ամենայն
ցաւոց կարգաւ և ցուցումն նոցա» խորագիրը կրող մի գործ, որը իրենից
ներկայացնում է Բունիաթ Սեբաստացու «Գիրք բժշկութեան տումարի»
(1630) երկասիրությունը: Պետք է նշել, որ եթե Ամիրդովլաթի «Ուսումն բը-
ժըշկութեան» գործը «Պողոսի բժշկարանում» ներկայացված է որոշ հավե-
լումներով («Դարձեալ վասն երակ առնելոյ հասիէթն» և ուրիշներ), ապա
«Գիրք բժշկութեան տումարի» բնագիրը ներ է մուծվել առանց փոփոխու-
թյունների: Առ այսօր հայտնի են Բունիաթի գրքի միայն 4 գրչագիր՝ Մաշ-
տոցի անվ. մատենադարանի ձեռագիր № 10203 (A), Վենետիկի Մխիթար-
յան միաբանության Մատենադարանի ձեռագիր № 1285 (B), Վիեննայի
Մխիթարյան միաբանության Մատենադարանի ձեռագիր № 830 (C) և Թբի-
լիսիի Կեկելիձեքի անվ. ձեռագրերի ինստիտուտի ձեռագիր № 52 (D), որոնց
հիման վրա կազմվել է «Գիրք բժշկութեան տումարի» քննական բնագիրը¹⁹,
Այսպիսով «Պողոսի բժշկարանում» մեր կողմից հայտնաբերված Բունիաթի
գրքի գրչագրով Մաշտոցի անվ. մատենադարանի հավաքածուն հարստա-
ցավ բնագրի ևս մի տարբերակով, որը, ինչպես ցույց տվեցին բնագրագի-
տական համեմատության արդյունքները, արտասահմանյան գրչագրերի հետ
կազմում է առանձին խմբագրություն՝ ի տարբերություն Մատենադարանի
№ 10203 ձեռագրի: «Պողոսի բժշկարանում» առկա Բունիաթի գրքի բնա-
գիրը պարունակում է 57 գլուխ, այսինքն 7-ով ավելի, քան քննական բնա-
գրում, որովհետև Պողոս բժիշկը որոշ ղեկաբերում բաժանել է առանձին գը-
լուխներ ըստ հիվանդությունների: Օրինակ, Բունիաթի գրքի քննական բնա-
գրում «Դուռն, որ յիշէ զվաճարը մաֆասելն, նըրիսն և ըրքնիսան» խորա-
գիրը կրող ԼԷ գլուխը ընդգրկում է նաև «տայուն ըլ Ֆիլ» (լատ.՝ Elephantiasis)
հիվանդությունը, մինչդեռ Պողոսի մոտ այն առանձնացրած է որպես՝
ԽԱ գլուխ: Կամ էլ Բունիաթի գրքի քննական բնագրի ԻԳ գլուխը՝ «Դուռն,
որ յիշէ զաթ-ըլ-ճամն և զաթ-ըլ-ըռեայ» խորագրով, Պողոսի մոտ բաժանված
է ԻԲ, ԻԳ և ԻԴ գլուխների ըստ առանձին կլինիկական ձևերի (պլևրիտ, թո-
քաբորբ, թոքի խոց): Այս փոփոխությունները սակայն լուրջ բնույթ չեն կը-
րում՝ մնալով խմբագրական տարբերակի սահմաններում: Մի քանի օրի-
նակ ևս, որոնք հաստատում են մեր կարծիքը Պողոսի բժշկարանում առկա
Բունիաթի գրքի բնագրի պատկանելությունը արտասահմանյան գրչագրերի
խմբագրական տարբերակին: Օրինակ, Բունիաթի գրքի է գլուխը՝ «Դուռն,

¹⁹ Բունիաթ Սեբաստացի, Գիրք բժշկութեան, աշխ. Դ. Մ. Կարապետյանի, Երևան,
1987:

որ յիշէ զքէապուսն» խորագրով քննական բնագրում վերականգնվել է ըստ B ձեռագրի (Վենետիկի մատենադարանի ձեռ. № 1285), քանի որ այն բացակայում է A հիմք-ձեռագրում (Մաշտոցի անվ. մատենադարանի ձեռ. № 10203)²⁰։ Պողոսի մոտ այն առկա է որպես Q գլուխ՝ «Վասն խապուսին, որ է խպլիկն»։ Կամ էլ Բունիաթի գրքի ԼԳ գլուխը՝ «Դուռն, որ յիշէ զսթսխաի լէհմին», ունի մի մեծ հատված, որը բացակայում է A ձեռագրում, սակայն առկա է երկրորդ խմբագրական տարբերակի ձեռագրերում (B, C, D), ինչպես նաև Պողոսի մոտ (Մաշտոցի անվ. մատենադարան, ձեռ. № 2739)։ Քննական բնագրում այն մնացել է տողատակում²¹, սակայն հաշվի առնելով այդ հատվածի կարևոր նշանակությունը (այստեղ շարունակվում է հիվանդությունից պատճառագիտության և ստածման հարցերի քննարկումը), վերջինս պետք է վերականգնվեր բնագրում, ըստ արտասահմանյան գրչագրերի խմբագրական տարբերակի, որին այժմ ավելանում է նաև «Պողոսի բժըլկարանի» տարբերակը։ Այսպիսով, Եվդոկիայի բժշկական դպրոցի բժշկական հանրագիտարանի աղբյուրների ուսումնասիրությունը մի անգամ ևս խոսում է սերտ կապերի մասին, որոնք գոյություն ունեին Փոքր Հայքի կենտրոնների միջև²²։

Մեզ հետաքրքրում էր նաև մեկ այլ հարց. արդյո՞ք օգտվել է Պողոս բժիշկը ավելի վաղ շրջանի հայկական աղբյուրներից և մասնավորապես «Գագիկ-Հեթումյան բժշկարանից» (Ժ—ԺԳ դդ.), որի խմբագրական տարբերակներն առկա են միջնադարյան հայկական բժշկարաններում և հատկապես Ամիրդովլաթի գործերում²³։ Կարևորելով հնադուրյն հայկական բժըլկարանի, կամ Վահրամ Թորգոմյանի խոսքերով «ավագ հեքիմարանի» նշանակությունը²⁴ մեր ավանդական բժշկությունից համար՝ այն համեմատել ենք «Պողոսի բժշկարանի» հիմնական երկու ինքնուրույն բաժինների հետ՝ 1. «Այս է գիրքն, որ կոչի ըստածում» (էջ 82ա—197բ) և 2. «Աստի ի վեր գրբեմք, զոր ինչ կայ [դեղ] Այբուբենական գրբուն» (էջ 198ա—352բ)։ Պարզվել է, որ բժիշկ Պողոսը «Գագիկ-Հեթումեան բժշկարանից»²⁵ վերցրել ու իր հանրագիտարանի վերոհիշյալ երկու գրքերում տեղադրել է մի շարք նյութեր, որոնք նվիրված են մահճաբուծության ու դեղագիտության հարցերին։ Այսպես, օրինակ, «Գագիկ-Հեթումեան» բժշկարանի ընդարձակ խմբագրական տարբերակից քսաներեք գլուխ հայտնաբերել ենք «Ստածման» գրքում, այն է՝ «Վասն ականջացաութեան պատճառին», «Վասն ամենայն քթի ցաւերուն», «Վասն ամենայն ցեղ ատամնացաւի», «Վասն բրսեմ ցաւին», «Վասն սրսեմի», «Վասն նուզլայի, որ ի կուրծքն իջանէ և հազ առնէ», «Վասն ստամոքին կամ որ ուռնայ ստամոքն», «Վասն խափանականի», «Վասն լերդացաութեան և ամենայն պատճառին», «Վասն մեծ լերդացաութեան», «Վասն արաղանին», «Վասն փայծաղնացաւի», «Վասն ամենայն ցեղ փորացաութեան», «Վասն խուլիխճին», «Վասն երկվամացաւի», «Վասն սնկան նստածեղին», «Վասն մամացին, որ [է] գոզին ցաւն», «Վասն որ այր մար-

²⁰ Բունիաթ Սեբաստացի, Աշխ. աշխ., էջ 67:

²¹ Տե՛ս Բունիաթ Սեբաստացի, Աշխ. աշխ., էջ 101, 142:

²² Տե՛ս Ս. Վարդանյան, Նոր տվյալներ միջնադարյան հայկական բժշկական կենտրոնների մասին (տե՛ս հաջորդ համարը):

²³ Տե՛ս Ս. Վարդանյան, «Գագիկ-Հեթումյան բժշկարանը» և Արա խմբագրական տարբերակները, «Պատմա-բանասիրական հանդես», 1985, № 2, էջ 146—224:

²⁴ Տե՛ս Վ. Թորգոմյան, Հայ բժշկական ձեռագիրք ս. Ղազարու վանքին. «Գագիկ-Հեթումյան բժշկարան», «Բազմավեպ», 1923, № 2, էջ 40:

²⁵ Տե՛ս Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարան, ձեռ. № 1281 (լուսապատճեն):

դոյ ձուրն ուռչի», «Վասն որ ծածուկ անդամն տաք ելուն ելնէ, և հատածի և արոյ յաղիքն վայր գայ», «Վասն նխրիս ցաւուն», «Վասն կատղած շան խածածի և գազանահարի», «Վասն կարճահարի» և վերջապես պարզ դեղերի մասին «Վասն մեկնութեան դեղոց» գլուխը: Ինչ վերաբերում է «Կագիկ-Նեթումյան բժշկարանի» բարդ դեղանյութերին նվիրված գլուխներին՝ «Վասն խուռսերուն», «Վասն ամենայն շարապներուն» և այլն, և ապա նրանք տեղադրված են «Պողոսի բժշկարանի» երկրորդ գրքում գրած «Ալքուրեբենական» կարգով, այսինքն «Ախրապատինում»: Իբրև ապացույց բերենք մի քանի օրինակ կատարած բնագրագիտական համեմատութիւնները:

**«Պողոս բժշկի բժշկարան»
Մաշտոցի անվ. մատենադարանի
ձեռ. № 2789, էջ 118ր**

Վասն ամենայն դեղ տատմանացաւի
ըստածումն և նշանն

Տես թէ լընտերն այտոց է և կարմիր, ի տաքութենէ է: Յառաջ երակ կտրէ ըզկեֆայն, ապա զվարդի եղն և զքացախն յիր[ար] խառնէ և պահ առ պահ ի բերանն առնու և պատրաստեցոյ ի գինոյ և ի մաէ: Թող ուտէ կտուած ոսպն, և քացախով տապաշիր տուր, և թէ այնի չի ողջանայ, առ քաֆուր, աֆիոն և բողի տակ, որ է օտար զահիր, ամենէն Ա Ա տէնկ, աղա և մաղէ, վարդեջրով, շաղվէ և մատուտ ի լընտին վերայ ած, օգտէ Աստուծով:

Ծարապ վարդի, որ սիրտն խնդացնէ
և անուշցնէ, կակղացնէ զբնութիւնն
(էջ 286ա)

Առ աղէկ կարմիր վարդի տերնն՝ լիտըր մի և ած ի վերան լիտրուկէս ջուր և աղէկ եփէ կրակով, որ ուծն դուս գայ և ապա քամէ և թէ քանի որ ջուրն լինի, նոյն կըրոով (Բ) շաքար և արկ ի ներս պղըննի և եփէ և աղէկ փրփուրն առ և եփէ, մինչև կապի, և աման արկ, և երբ պիտենա, տուր ըստ կարեացն. օգտի Աստուծով:

Հայ հեղինակների գործերից բացի «Պողոսի բժշկարանում» հիշատակվում են նաև օտար աղբյուրներ: Պատահական չէ, որ ԺԸ դարի հայ հեղինակն իր գիրքն անվանել է թարգմանություն «ի տաճկած, ֆուսկաց և հայոց գրքէ»: Թարգմանիչ էին իրենց անվանում «Մեծն Մխիթարը», Ամիրդովլաթ Ամասիացին և միջնադարի բոլոր հայ բժիշկների մեծ մասն այն առումով, որ օգտվել են օտար գրականությունից և թարգմանել անտիկ, բյուզանդացի, արաբ և պարսիկ հեղինակների գործեր: Ամիրդովլաթ Ամասիացին «Անգիտաց անպէտի» առաջաբանում գրել է իր մասին. «Եւ յետոյ գնացաք ի շուրջ եկաք բազում քաղաքանի, և գծովն անցաք, եւ շուրջ եկի զաշխարհն Մակեդոնացոց. եւ եկայ բնակեցայ ի մայրաքաղաքն Կոստանդինուպուլիս, եւ հաւաքեցաք շատ գրեանք ի յայլ ազգեաց, եւ աշխատեցաք եւ ուսաք զբառերն եւ զանուանքն ազգի ազգի, եւ զփոխանն, եւ զառնելուն

**«Կագիկ-Նեթումեան բժշկարան»
Վեներտիկի Մխիթարյան միաբանության
մատենադարանի ձեռ. № 1281, էջ 256**

Վասն ամենայն դեղ
տատմանացաւութեան

Յորձամ նարոց սկուայք ցաւի, տես թէ լինդքն այտոց լինի և կարմրագոյն՝ ի տաք է: Երակ առ ի կեֆայն և ապիկիք առ և զվարդի ձեթ և քացախն խառնէ և պահ-պահ ի բերանն առնու և թափէ և այլ առնու, ի գինո և ի մաէ պատրաստոց և կերակուրն քացխով և կտված ոսքն կերոց: Թէ չօգտէ, քաֆուր, աֆիոն, բողկի տակ դանկ-դանկ աղա և վարդ ջրով շաղէ և մատամբ ի վերայ լնդացն ած:

Ծարապ վարդի [սիրտն] խնդացնելու
և բնութիւն կակղնայու (էջ 65)

(Առ) տերն կարմիր վարդի՝ լիտր մի, եփէ, որ զուծն ի դուրս տա, ապա քամէ և քանի ջուրն, Բ (2) շաքար լից: Եփէ, որպէս այն և տուր ըստ կարեաց:

չաքն, հինգ լեզուաւ, կամօքն Աստուծոյ»²⁶: Այսպիսով «թարգմանիչ» բառը այս կոնտեքստում նշանակում է հույն և արաբ տերմինաբանութեանն ու գրականութեանը գիտակ բժիշկ: Հենց այս իմաստով էլ Պողոս բժիշկը իրեն անվանել է թարգմանիչ: Անտիկ և բյուզանդացի բժիշկներից «Պողոսի բժշկարանում» բույրից հաճախ հիշատակվում են Գալիանոսի և «Ֆոանկաց իմաստուն հէքիմ» Իսքանտարի, այսինքն Ալեքսանդր Քրալացու անունները: Վերջինս մ. թ. Ջ դարում ապրել է Հռոմում և գրել մի ընդարձակ գիրք՝ նվիրված ներքին հիվանդություններին²⁷: Սրանց գործերից բացի «Պողոսի բժշկարանի» հիմնական աղբյուրներից է նաև Իրն Սինայի «Կանոնը»: Այսպես, օրինակ, «Վասն թտպիր սրնընդեան տղայոց, որ առողջ սընցնէ» ԽՔ գլխում Պողոսը գրել է. «Յորժամ ի մօրէն բաժանի, պիտի շորս մատ շափեն, պիտի աւելկէկ զպորտն կտրեն ու կակուղ բրդէ պատրուքիէ կակուղ մանծէ պատրուք կապէ, կակուղ մանծով կապէ, զկապն ի միջուն արէ, որ Բ մատի շափ ի վեր և Բ մատի շափ ի վար լինի զկտան, հում ձիթով թաց [ի] վերայ պորտին դիր և բանպակն ի պատրուք արա զականջին, քթին մէջն սրբէ. ասեալ են, թէ զարտալջօրու, աղբերաց արիւն, անձրութ, զքամօն, օշնա, սապո. ամէնն միաշափ ծծէ, որպէս ծարուր արա, մաղէ, ի վերայ պորտուն ցանէ»²⁸: Թեպետ այստեղ նշված չէ Իրն Սինայի անունը, սակայն մեր կողմից «Կանոնի» համապատասխան հատվածի հետ կատարած բնագրագիտական համեմատությունը խոսում է այն մասին, որ մեջքերումը «Կանոնից» է: Ստորև բերում ենք այդ հատվածը. «Первым долгом необходимо перерезать пуповину, оставляя ее на четыре пальца, затем перевязать ее слабо скрученной чистой шерстью, чтобы не было больно, после этого надо положить на это место лоскут ткани, смоченной оливковым маслом. После обрезания пуповины необходимо взять поровну куркумы, драконовой крови, анзрута, кумина, ушны и мирры, растерев их, посыпать на пуповину...»²⁹

Օտար աղբյուրների օգտագործման հարցը միջնադարյան հայկական բժշկարաններում սերտորեն առնչվում է մեկ այլ կարևոր պրոբլեմի հետ՝ այն է, օտար տերմինների դերը միջնադարյան հայկական բժշկական տերմինաբանության մեջ: Հայտնի է, որ եթե մինչև ժ դար հայկական բժշկական տերմինաբանությունում հիմնականում օգտագործվել են հունական բառեր, ապա ժ—ժԸ դդ. գերիշխող են դառնում արաբական և պարսկական տերմինները³⁰: Միաժամանակ ուշ միջնադարում ուժեղանում է նաև մեկ այլ միտում՝ լատիներեն գրականության և տերմինաբանության մուտքը միջնադարյան հայկական բժշկարանները, որը նկատվում էր ժԾ դարի հեղինակների մոտ, սակայն ավելի ցայտուն դարձավ ժԸ դարում³¹:

Այս միտումը նկատվում է «Պողոսի բժշկարանում», որին ավելանում է նաև թուրքերենի աճող ազդեցությունը: Պատահական չէ, որ Պողոս բժիշկը իր հանրագիտարանի վերջին գլխում, ներմուծելով Ամասիացու «Դեղերի զօրութիւնը», կատարել է լուրջ խմբագրական աշխատանք՝ ավելացնելով «Աղյուսակաձև բառարանում» մի նոր սյունակ՝ զուտ «տաճկի» կամ թուր-

²⁶ Ամիրդովլաթ Ամասիացի, Անգիտաց անպէտ, խմբ. Կ. Բաւսմաջլանի, Վիեննա, 1926, էջ 9:

²⁷ St' u G. Harig, P. Schneek, Geschichte der Medizin, Berlin, 1990, էջ 70—71:

²⁸ Մ. Մ., ձեռ. № 2789, էջ 30աբ:

²⁹ Ибн Сина. Канон врачебной науки. кн. I. Ташкент, 1981, с. 298.

³⁰ St' u Л. Оганесян, История медицины в Армении, т. I, Ереван. 1946 էջ 150—220:

³¹ St' u Ս. Վարդանյան, Ամիրդովլաթ Ամասիացի և միջնադարյան հայ բժշկական տերմինաբանությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1990, ք. 4, էջ 105—120:

քերեն բառերի համար, և հարստացնելով «Ֆոանկի» կամ լատիներեն դեղանունները: Ստորև օրինակներ ենք բերում այդ բառարանից՝ ըստ Ամասիացու ինքնագրի և նրա խմբագրական տարբերակի.

Ամիրդովաթ Ամասիացի «Գեղերու զօրութիւն» (Մ. Մ., ձեռ. № 8871, էջ 102բ, 128բ)	«Պողոսի բժշկարան» «Վասն քառի ամենայն դեղոց Զ լեզուս» (Մ. Մ. ձեռ. № 2789, էջ 854բ, 870բ)
պարսի՝ խունիսիօուզամ, (պարս. Khuni siawuṣān)	խունիսիօուզամ (պարս. Khuni siawuṣān)
յարապի՝ տամ ըլ ախվան, ար. Damm-al-akhweyn	տամ ըլ ախվան (ար. Damma-al-akhweyn)
ֆոանկի՝ —	սանկիս տրակոնի (լատ. Sanguis draconi)
հոմոնց՝ տրակոնիօնեմայ (լատ. Draconition haema)	տրակոն կամ տիսօնեմայ (լատ. Draconition haema)
հայոց՝ աղբրաց արուն տաճկի՝ —	աղբրաց արուն դարտաշ դունի (թուրք. Kardas kani)
պարսի՝ զրիշք պարս. zirišk յարապի՝ ամիրպարիս ար. amirbāris	զրիշք (պարս. zirišk) ամիրպարիս (ար. amirbāris)
ֆոանկի՝ —	պերպերիս (լատ. Berberis)
հոմոնց՝ —	քիշնիշ
հայոց՝ ծոր	ծոր
տաճկի՝ —	դարամուխ (թուրք. qaramuq)

Առաջին դեպքում գործ ունենք «աղբրաց արյուն» կոչվող *Dracaena draco* L. ծառի իեծի հետ, որը, ըստ ավանդական բժշկության տվյալների, ուներ ուժեղ հակաբորբոքային ազդեցություն: Այս անվամբ հայտնի էր նաև *Phelypaea coccinea*-ն, որը հանդիպում է հայկական բուսաշխարհում³²: Ինչպես տեսնում ենք, Պողոս բժիշկը Ամիրդովաթի համեմատությամբ ավելացրել է բույսի լատիներեն՝ *Sanguis draconi* և թուրքերեն՝ *Kardas kani* անունները: Իսկ երկրորդ դեպքում, որտեղ խոսքը ծոր բույսի մասին է (լատ. *Berberis vulgaris*), նա ավելացրել է ևս երկու նոր անուն՝ լատիներեն— *Berberis* և թուրքերեն՝ *qaramuq*: Հետաքրքրական է նշել, որ Պողոսի մոտ, ինչպես էլ նրանից առաջ Ամիրդովաթի բժշկարանում, որոշ օտար տերմիններ և հատկապես լատիներեն բառերը աղճատված են: Այս երևույթը ժամանակին նկատել է Կարստը³³ ժժ դարի մի եռալեզու՝ հայերեն-արաբերեն-լատիներեն բառարանի առթիվ, սակայն այդ իրողությունը չի փոխվել նաև ժԸ դարում:

Ամփոփելով մեր ուսումնասիրությունը՝ հանգում ենք այն եզրակացության, որ ժԸ դարի հայկական բժշկական հանրագիտարանը՝ «Պողոսի բժշկարանը», իր հարուստ նյութերով մահճարուժության, դեղագիտության և մասնավորապես բուսաբուժության վերաբերյալ, ինչպես նաև աղբյուրագիտության և տերմինաբանության ասպարեզում, մեծ հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն հայ բժշկապատմության, այլ նաև ժամանակակից բժշկության համար, որը իր սեփական հայացքն է ուղղում ավանդական բժշկության փորձի վրա հատկապես վերջին տասնամյակներում:

³² Sbu Амирдовлат Амасиаци, Непужное для неучей. Комментированный перевод С. А. Варданян, М., 1990, էջ 758, 779.

³³ Steu J. Karst. Das trile ingue Medizinalossar aus Ms. 310 d. Wiener Mecht Bihliothek. — Zeitschr. fur armenische Philologie, 1903, B. 2, H. 2, S. 112.

- Մաշտոցի անվ. մատենադարան. «Պօղոս բժիշկ, բժշկարան ի հայոց և ի տանկաց» 1748 թ. Եվդոկիա (Թոխաթ). գրիչ՝
- Զաքարիա տիրացու— 3ա—78բ, 191ա—202բ, 205ա—208բ, 210բ—216բ, 218ա—219ա, 220աբ, 221բ—227ա, 230ա—233ա, 234ա—237ա, 239ա, 243ա—245ա, 247ա—248ա, 253ա—257բ, 262ա—264ա, 268ա—273բ, 280ա, 282ա, 284ա—290բ, 314ա—315բ, 323ա—324բ, 330ա—338ա, 339ա—340բ, 342ա—351բ:
- Յակոբ Թոխաթցի— 79ա—190բ, 202բ—204բ, 209ա—210ա, 216բ—217բ, 219աբ, 220բ—221ա, 228ա, 227ա—229բ, 233աբ, 237բ—242բ, 245բ—246բ, 248բ—252բ, 257ա, 258ա—261բ, 264ա—267բ, 274ա—279բ, 280բ—283բ, 291ա—313բ, 315բ—322բ, 324բ—329ա, 338բ, 341ա, 351բ—397ա, չգրված՝ 329բ: Թերթ՝ 398: Պրակ՝ խառը: Նիոթ՝ թողթ, լուսագծերով և 3 մահիկադրոշմով (սրանց տարբեր ձևերը բնորոշ են եվրոպական թղթի համարը որը ներմուծվում էր Օսմանյան կայսրություն, տե՛ս С. М. Briquet «Les Filigranes», t. II, Leipzig, 1923, NN 5166—5201, էջ 307): Մեծութիւն՝ 90,5×21: Գրութիւն՝ երկսիւն: Գիր՝ նոտագիր: Տող՝ 26—27: Կազմ՝ դրոշմազարդ շագանակագույն կաշի, Ա և Բ փեղկերին հնգական փակագիր. «Զաքար Տիրացույ», միջուկը՝ տափտակ, աստուղ՝ դրոշմազարդ բազմագույնի կտաւ: Մանրանկարչութիւն-լուսանցազարդ՝ թռչնային, հրեշտակ, բժիշկ՝ սպիտրով: Զարդագիր՝ թռչնագիր, կենդանագիր, հանգուցագիր, հրեշտակագիր: Վիճակ՝ բավարար, ունի թափուած թերթեր: Հիշատակարան գրչի՝ 135բ, 289բ, 352բ—353ա: Բովանդակութիւն՝ Յար— ցանկ (ցանկի Ա-ից մինչև ԻԹ-ը միաւորը թափուած, որը վերականգնել ենք ըստ քննագրի— Ա. Ս.):
- 3բ—4բ. Ա. Յառաջին դուռն յիշեմք զբժշկութեան զուսումն և զգնորհքն և զգորութիւնն, թէ որպէս է բժիշկն և որպէս փաստք բժշկին և որպէս ճանաչեն զմահացու դէպքերն:
- 4բ—5բ. Բ. Երկրորդ, որ ցուցան[է] զբժշկութեան զչաքն և զբաժինն մինչև ուր հասանի և քանի բաժանի:
- 5բ—6ա. Գ. Երրորդ, որ զնիւթն յիշէ և զմիզանն, թէ որպէս է և զչաքն նիւթներուն:
- 6բ—7բ. Դ. Չորս դուռն, որ յիշէ զխառնուածքն և զբնութիւն նոցա թէ որպէս է:
- 7բ—9ա. Ե. Հինգերորդ. յիշեմք, թէ որպէս ընծայի [մանուկն ի] յորովայն մօրն:
- 9ա—10ա. Զ. Վեց դուռն, որ յիշեմք զուկերանքն, թէ որպէս գոյեացոյց Տէր Աստուած:
- 10աբ. Է. Վասն ստեղծման գլխոյն և զըղեղին:
- 10բ—11ա. Ը. Վասն ստեղծման սրտին:
- 11աբ. Թ. Վասն ստեղծման զլերդին, որ է տանուտէր անձինն:
- 11բ. Ժ. Վասն ստեղծման փայծոյանն:
- 11բ—12ա. ԺԱ. Վասն ստեղծման թոքին:
- 12աբ. ԺԲ. Վասն ստեղծման լեղուն:
- 12բ. ԺԳ. Վասն ստեղծման երիկամացն:
- 12բ—13ա. ԺԴ. Վասն ստեղծման ստամոքին:
- 13աբ. ԺԵ. Վասն ստեղծման աղեցն:
- 13բ. ԺԶ. Վասն ստեղծման հայաքշտին:
- 13բ—15ա. ԺԷ. Վասն ստեղծման օրինուածոյ աչացն:
- 15ա. ԺԸ. Վասն ստեղծման ակընչին:
- 15ա. ԺԹ. Վասն ստեղծման քթին:
- 15ա. Ի. Վասն ստեղծման պոկընքացն և լեզուին:
- 15բ. ԻԱ. Վասն ստեղծման ձեռացն:
- 15բ. ԻԲ. Վասն ստեղծման ծղծերուն:
- 15բ—16ա. ԻԳ. Վասն ստեղծման ձուերոյն:
- 16ա. ԻԴ. Վասն ստեղծման լույսային:
- 16ա. ԻԵ. Վասն ստեղծման ոսկերացն և մսին և երակնոյն և ջղին և կցուածոցն մարմնոյն և ոսկերացն և ամենայն անձինն:
- 16բ. ԻԶ. Վասն ստեղծման ազլայնեղոյն, որ է կտոր մի միս:
- 16բ. ԻԷ. Վասն ստեղծման օրինուածոց փայլանտներոյն:
- 16բ. ԻԸ. Վասն ստեղծման յերակնուն, թէ քանի է և կամ քանի բաժանի:
- 16բ—17ա. ԻԹ. Վասն յիշեմք զհինգ զգայարանքն մարդոյն:
- 17ա—18ա. Լ. Վասն թպտիր զատողչութեան պահելոյ, թէ ինչ է:
- 18աբ. ԼԱ. Վասն թըտպիր կերակուր ուտելոյ, թէ որպէս է ասացել քըծիշկն:
- 18բ. ԼԲ. Վասն թըտպիր, թէ թաժայ մրերգն որպէս ուտեն:
- 18բ—19ա. ԼԳ. Վասն թըտպիր ջուր խմելոյ, թէ ինչպէս և որպէս լինի:
- 19աբ. ԼԴ. Վասն թտպիր գինի խմելոյ, թէ որպէս առնեն զինքն:

- 19բ. ԼԵ. Վասն թտպիր քուն լինելոյ և յարթուն կենալոյ:
- 19բ—20ա. ԼԶ. Վասն թտպիր գրընութիւն կակղանալոյն թէ որպէս է:
- 20աբ. ԼԷ. Վասն թտպիր, ամուսնութեան հետ կընոչ թէ որպէս է:
- 20բ. ԼԸ. Վասն թտպիր, որ զանձն աճեալուն օգտութեան:
- 20բ—21ա. ԼԹ. Վասն թտպիր ի բաղնիս մտնելուն և յօգնութեան նորայ:
- 21ա. Խ. Վասն այն թտպիր որոյ անձն կիր օծեն և յետոյ թէպտիր՞ն այն է, որ չկակըծէ և օծելիք նոցին:
- 21աբ. ԽԱ. Վասն թտպիր, որ որպէս աշխատին օգտէ անձինն:
- 21բ. ԽԲ. Վասն թտպիր փսխելուն և յօգնութեան նոցին:
- 21բ—22բ. ԽԳ. Վասն լուծման դեղ առնելուն թտպիր և օգնութիւն:
- 22բ—23ա. ԽԴ. Վասն թտպիր յերակ առնելոյ և յօգնութեան նոցա:
- 23աբ. ԽԵ. Վասն հաճումէք առնելոյ և յօգնութեան նորա:
- 23բ—27բ. ԽԶ. Վասն տրգոյն դնելոյ թտպիրըն և յօգնութեան նորա:
- 27բ—28ա. ԽԸ. Վասն թտպիր ի ճանապարհ գնալոյ և օգնութեան որ ինչ ածէ անձինն (ցանկում ԽԷ. ԽԶ տեղերը փոխուած— Ա. Ս.):
- 28աբ. ԽԸ. Վասն թտպիր ի մաւ նստելոյ, զոր աչքն չի մթնէ:
- 29բ—35ա. ԽԹ. Վասն թտպիր սընընդեան տղայոց, որ առողջ սընցէ:
- 35ա—38բ. Մ. Վասն յերակ ճանաչելոյ թտպիր, որ է նապըզըն:
- 38բ—42ա. ՄԱ. Վասն կուրա ճանաչելոյ և զշվումն և զոտուսպն:
- 42ա—44ա. ՄԲ. Վասն ճանաչելոյ զպօհրուն և զքրտինքըն:
- 44ա—48ա. ՄԳ. Վասն ճանաչելոյ զհիւանդն զմահու և զկենաց նշանն:
- 48ա—49ա. ՄԴ. Վասն առաջգիտութեան նշանացն և թծիչկն ճանաչել, թէ փոխի ի հիւանդութենէ ի հիւանդութիւն:
- 49աբ. ՄԵ. Վասն գիտութեան զօթն ամենայն քաղաքի և բնութիւն նորայ:
- 50ա. ՄԶ. Վասն գիտութեան օղիցն և քննութեան նոցա որպէս է:
- 50ա—51բ. ՄԷ. Վասն քննութեան չորս եղանակացըն և թտպիրնուն նոցա:
- 51բ—52բ. ՄԸ. Վասն զայս պիղծ խառնուածոցն, որ ընծայի, կամ յարեճնէ, կամ սափրայէ, կամ պաղղամէ, կամ սաւտայէ լինի:
- 53ա—81բ. Ըստածումն ամենայն ցաւոց կարգաւ և ցուցումն նոցա (խորագիրը ըստ բնագրի— Ա. Ս.):
- 53աբ. Ա. Նախ վասն սարսամին ըստածումն, թէ ի տաքէ և թէ ի հովէ:
- 53բ—54ա. Բ. Վասն տասարին, որ սուտարի ասեն:
- 54աբ. Գ. Վասն սուպաթին և սուպաթի սահարին:
- 54բ—55ա. Դ. Վասն ճունտննին, որ է խնութիւն:
- 55աբ. Ե. Վասն մալախուլիայի, որ է խելաց պակասութիւն:
- 55բ. Զ. Վասն քապուսին, որ է խալիկն:
- 55բ—56ա. Է. Վասն սարային, որ է ուշուխ:
- 56աբ. Ը. Վասն սաքթային:
- 56բ. Թ. Վասն հազարին ցարին:
- 56բ—57ա. Ժ. Վասն ըռահշային, որ է ձեռաց դողպն:
- 57աբ. ԺԱ. Վասն ֆազիֆին:
- 57բ—58ա. ԺԲ. Վասն լակվային, որ է երես ծոխն:
- 58աբ. ԺԳ. Վասն թաշանուշին:
- 58բ—59ա. ԺԴ. Վասն սավտային:
- 59աբ. ԺԵ. Վասն աշացատութեան:
- 59բ. ԺԶ. Վասն ականջացատութեան:
- 59բ—60ա. ԺԷ. Վասն խաշամի, որ է քթին ցարին:
- 60աբ. ԺԸ. Վասն որոյ քիթն կաթէ և սրումի:
- 60բ—61ա. ԺԹ. Վասն զիպահանին, որ է կարմիր ուռէց:
- 61աբ. Ի. Վասն զուգամին, որ է տմաղուն:
- 61բ—62ա. ԻԱ. Վասն հազին, որ է սաղիխաֆիս:
- 62աբ. ԻԲ. Վասն զաթընամին:
- 62բ—63ա. ԻԳ. Վասն զաթընդիպին:
- 63աբ. ԻԴ. Վասն զաթը սատըլին:
- 63բ. ԻԵ. Վասն խաֆաղանին:
- 63բ—64ա. ԻԶ. Վասն ստամոքացատութեան:
- 64ա—65ա. ԻԷ. Վասն ազգի-ազգի իսպին:
- 65աբ. ԻԸ. Վասն նգի, որ է զիւիրն:
- 65բ—66ա. ԻԹ. Վասն դուլինճին պատճառին:
- 66աբ. Լ. Վասն որ նստոյ տեղն դուս գալ:

- 66բ. ԼԱ. Վասն պատրի պարիթ ցաւին:
- 66բ—67բ. ԼԲ. Վասն որոյ լերդն ուրի:
- 67բ—68ա. ԼԳ. Վասն փայծաղնացաւութեան:
- 68աբ. ԼԴ. Վասն էարաղանին:
- 68բ—69բ. ԼԵ. Վասն ըթթախային, որ է արծվիք:
- 69բ—70ա. ԼԶ. Վասն երիկամացաւութեան:
- 70ա. ԼԷ. Վասն յորթաթուլին:
- 70աբ. ԼԸ. Վասն յառնացի անդամին:
- 70բ—71ա. ԼԹ. Վասն որոյ արգանդն խծկի:
- 71ա—72ա. Խ. Վասն զվաճարոյ մաֆասիրի:
- 72ա. ԽԱ. Վասն տայուլ ըլկիլին:
- 72աբ. ԽԲ. Վասն ամէնօրեայ բոնած ջերման:
- 72բ—73ա. ԽԳ. Վասն հասպային:
- 73ա. ԽԴ. Վասն ուռեցքի, որ յարենէ լինի:
- 73աբ. ԽԵ. Վասն բոր և քոսին:
- 73բ—74ա. ԽԶ. Վասն տամբակուրին:
- 74աբ. ԽԷ. Վասն պահաղին և սիկիլին:
- 73բ. ԽԸ. Վասն կոտրածի:
- 74բ—75ա. ԽԹ. Վասն տայուսայլապին:
- 75ա. Ծ. Վասն մարդոյն, որ անձն հոտի:
- 75աբ. ԾԱ. Վասն վնասակար և մահացու դեղոցն:
- 75բ—76ա. ԾԲ. Վասն զողութեան, որ է ճուտամն:
- 76ա. ԾԳ. Վասն որ ինչ ցաւ գալոյ է նշանն:
- 76աբ. ԾԴ. Վասն խոզք ցաւի, որ է խանազիրն:
- 76բ—77ա. ԾԵ. Վասն պաւասիրին:
- 77աբ. ԾԶ. Վասն սնկան ստածումն:
- 77բ—78բ. ԾԷ. Վասն սնկան վնասակար դեղերին:
- ԾԸ. Վասն հիվանդին բօհրանին (չիք բնագրում— Ա. Ս.):
- ԾԹ. Վասն հիւանդին ճանաչելոյ զմահուն և զկենացն (բնագրում՝ չիք— Ա. Ս.):
- Կ. Վասն հիւանդին օղոյն և տարոյն և ամսոյն և աւուրն և ժամն. խրատք կամ որ լեզուն կապի և կամ ծանոր խօսի (բնագրում՝ չիք— Ա. Ս.):
- 79ա—81բ. Թանկ երկրորդ վասն բովանդակ զխոցն, զոր ինչ կայ ի գիրքս այս:
- 82ա—197բ. Այս է գիրքն, որ կոչի ըստածումն, զոր ոտից մինչև ցգլուխն, թէ ինչ կերպ ցաւ որ լինի, կամ ինչ պատճառէ լինի՝ թէ պաղէ, թէ տաքէ, թէ արիւնէ, թէ սաֆրայէ, և թէ սէվտայէ, և թէ պաղամէ. գամենն կարգաւ խօսի, զոր ի տանկաց թարգմանեցաւ մեծաւ աշխատութեամբ տիրացու Պօղոսին: Նոր Թարգմանածին մէջն երբեմն տանկի բառ այլ գտանի և այլն հայոց գրքէ է (խորագիրը՝ ըստ բնագրի. ցանկում չիք— Ա. Ս.):
- 82ա—85բ. ԿԱ. Վասն զխացաւերուն և ամենայն պատճառոցն:
- 85բ—86բ. ԿԲ. Վասն լեայ ցաւուն:
- 86բ—87ա. ԿԳ. Վասն սիլ մարագին:
- 87ա. ԿԴ. Վասն նայսիանային:
- 87բ—89բ. ԿԵ. Վասն մալախուլիապին:
- 89բ—90ա. ԿԶ. Վասն սանային, որ է խելաց պակասութիւն:
- 90բ. ԿԷ. Վասն աշրիս մաշոխ ցաւուն:
- 91ա—92ա. ԿԸ. Վասն յօտորանին, որ ոմանք սարայ կոչեն:
- 92ա—93բ. ԿԹ. Վասն անքապուսին:
- 93բ—95ա. Լ. Վասն յասարային:
- 95ա—96ա. ԼԱ. Վասն հօխնայի մութային:
- 96ա—98ա. ԼԲ. Վասն ֆայիֆին:
- 98բ—99ա. ԼԳ. Վասն թէշախտի, որ ջղերն քաշվի:
- 99աբ. ԼԴ. Վասն սլլերաշին, որ է ոտից դողալն:
- 99բ. ԼԵ. Վասն ալխատերին:
- 99բ—100ա. ԼԶ. Վասն էլիկանին:
- 100ա—102բ. ԼԷ. Վասն նոզլային:
- 102բ—106բ. ԼԸ. Վասն աչացաւութեան:
- 106բ. ԼԹ. ա. Վասն աչաց ներմակի և վատատեսութեան, [որ ինչ պատահ]ի (շարունակութիւնը՝ թափումն):
- բ. Վասն աչաց ջուր իջնելուն և աղլեմիայ շինելուն և թութիայ շինելն (բնագրում՝ թափումն— Ա. Ս.):

- 107ա—112բ. Ձ. Վասն աչաց կարմրելուն և արդիմքին և ըռմդէին և աչաց բորին և աչաց սնկին և ջուր իջնելուն: Եւ որ գիշերն լոյս չի տեսնէ և ցեցին և մազին, և որ աչքն դուս ուտայ և այլն:
- 113ա—115ա. ՁԱ. Վասն ականջացաւորութեան պատճառին:
- 115ա—116ա. ՁԲ. Վասն ամենայն քթի ցաւերուն:
- 116բ—118ա. ՁԳ. Վասն ամենայն ազգ բերանացաւորութեան:
- 118բ—120ա. ՁԴ. Վասն ամենայն ցեղ ստամանացաւի և ստամոյս և նշանքն:
- 120բ—122բ. ՁԵ. Վասն ամենայն ազգ փողացաւի: Եւ որ տրզուկ երթայ բերան:
- 122բ—123ա. ՁԵ. Վասն որ զանկիկն ընկնի:
- 123ա—124ա. ՁԶ. Վասն քրտեմ ցաւին:
- 124ա. ՁԷ. Վասն սրեմմի:
- 124ա—125բ. ՁԸ. Վասն նուզլայի, որ ի կուրծքն իջանէ և հազ առնէ:
- 126ա—128ա. ՁԹ. Վասն ի հեջքն եղածին:
- 128ա—129ա. Ղ. Վասն դաթաւորին և ինչ հազայ խուխ և արիւն գայ:
- 129աբ. ՂԱ. Վասն որ ընդ բերանն արիւն գայ:
- 129բ—131ա. ՂԲ. Վասն հեծկլտուկի և ինչ որ ուտէ՝ փըլսէ:
- 131բ—135բ. ՂԳ. Վասն ստամոքին, կամ որ ուտենայ ստամոքն:
- 136ա—138բ. ՂԴ. Վասն խափանականի:
- 139ա—143ա. ՂԵ. Վասն լերդացաւորութեան և ամենայն պատճառին:
- 143ա—148բ. ՂԶ. Վասն մեծ լերդացաւորութեան:
- 149ա—150ա. ՂԷ. Վասն արաղանին:
- 150բ—151բ. ՂԸ. Վասն փայծաղնացաւի:
- 151բ—152բ. ՂԹ. Վասն սըսխայի:
- 153ա—159ա. Ճ. Վասն ամենայն ցեղ փորացաւորութեան:
- 159բ—162ա. ՃԱ. Վասն խուլինճին:
- 162բ—163բ. ՃԲ. Վասն երիկամացաւի:
- 163բ—165ա. ՃԳ. Վասն սնկան նստատեղին:
- 165ա—167ա. ՃԴ. Վասն որ նստատեղն ի դուրս գայ և այլ վասն սնկան:
- 167բ—169ա. ՃԵ. Վասն մամացին, որ[է] գոզին ցաւն:
- 169ա—171ա. ՃԶ. Վասն որ ի մարդն քար ընծայի:
- 171աբ. ՃԷ. Վասն որ գոզն արգելի կամ արիւն ջոէ:
- 171բ—172ա. ՃԸ. Վասն որ այր մարդոյ ձուքն ուռչի:
- 172բ—173բ. ՃԹ. Վասն որ ի կանանց հաշիւ չի լինի, մոտ երթա, օգ... (շարունակութիւնը՝ թափուած— Ա. Ս.):
- 174ա—176ա. ՄԺ. Վասն որ ծածուկ անդամն տաք ելուն ելնէ, և հատածի և որոյ աղիքն վայր գայ (սկիզբն թափուած— Ա. Ս.):
- 176աբ. ՄԺԱ. Վասն նշանաց հեծկի:
- 176բ. ՄԺԲ. Վասն շանշահուային, որ է անկուշտ մարդն:
- 176բ—177բ. ՄԺԳ. Վասն այն ցաւին, որ կոչի հադայ, որ դափիլ փորն լուծի:
- 178ա—180ա. ՄԺԴ. Վասն նիքիս ցաւուն:
- 180աբ. ՄԺԵ. Վասն նշանաց պալղամի... և կապտի (շարունակութիւնը՝ թափուած):
- ՄԺԶ. Վասն կալընայ ցաւին (բնագրում՝ թափուած— Ա. Ս.):
- ՄԺԷ. Վասն դվելի ցաւուն, որ յուրքն հաստանայ (բնագրում՝ թափուած):
- 181աբ. ՄԺԸ. Վասն դարփիլի, որ է փղի ցաւն:
- 181բ. ՄԺԹ. Վասն դալափային, որ է աղուեսցաւ:
- 181բ—182ա. ՄԻ. Վասն թեփուկին, որ ի գլուխն լինի:
- 182ա—185ա. ՄԻԱ. Վասն կատղած շան խածածի և գազանահարի:
- 185աբ. ՄԻԲ. Վասն օծահարի:
- 186աբ. Վասն կարճահարի:
- 186բ—187ա. Վասն խեչիփարի ցաւուն:
- 187բ—189բ. ՄԻԵ. Վասն գուներոյ. այս գլուխս խիստ գեղեցիկ է, որ կամի ուսանիչ:
- 190աբ. ՄԻԶ. Վասն աղեղնացաւին, որ լեզուն կապի:
- 191ա—192բ. ՄԻԷ. Վասն ԺԲ (12) ամսոց խօսք:
- 192բ—197բ. ՄԻԸ. Վասն մեկնութեան դեղոց:
- 198ա—352բ. Աստի ի վեր գրեմք գոր ինչ կայ ի վերայ Այբորեւնական գրերուն:
- 199ա—205ա. ՄԻԹ. Վասն աչաց ցաւու դեղեր և ականջացաւերն և ի պաղէ եղած նուզլան յայտնէ:
- 205ա—210ա. ՄԻ. Վասն բորի և բերնի ամենայն ցաւի:
- 210բ—214բ. ՄԻԱ. Վասն գլխացաւի մանուններ և շարքաթներ և հապերն:
- 215ա—217բ. ՄԻԲ. Վասն ըսքսչայի և ամպէր և միակ և մոմիայ և շաֆերն շինելն յայտնէ:

- 218ա—219բ. ԸԼԳ. Վասն եպիստոներն ամենայն ցաւի:
- 220ա—221ա. ԸԼԴ. Վասն ամենայն գրորներն, որ են ցանկիք:
- 221բ. ԸԼԵ. Վասն ամենայն էյարիճն... տոիֆիֆի, զաֆրան, տառչին (շարունակութիւնը՝ թափուած— Ա. Ս.):
- ԸԼԶ. Վասն ըխտաւորի (քնագրում՝ թափուած):
- 222ա—229ա. ԸԼԷ. Վասն թրիաքներուն և թրի և դանակի ստածելն և դէղերն և ջրերն և մայրամներն և թնրեցող դէղերն ցուցանէ և թթցուններն... ով (սկիզբն թափուած) աղէկրներ այս դէղս...
- 229աբ. ԸԼԸ. Վասն սպանող դէղերն յայտնէ, և այլ տեղ կայ գրած:
- 229բ. ԸԼԹ. Վասն իրիկամնացաւին, իրիկամնացաւի իշուածք... որ լինի...
- 230ա—233բ. ԸԼԸ. Վասն լուծման դէղերն և մաճուններն և որ տխմար բժիշկն սուր դէղ տայ և շատ լուծէ, և ում լեզուն կապի:
- 234ա—238բ. ԸԼՍԱ. Վասն խոտներուն:
- 239ա—242բ. ԸԼԲԲ. Վասն ծարաւի և ծաղկի և ծնկան և ծորի յակրաս: Ի թութմայէ է, թէ ի (շարունակութիւնը՝ թափուած):
- 243ա—246բ. ԸԼԳԳ. Վասն կանանց հայզին և այլն:
- 247ա—251բ. ԸԼԴԴ. Վասն հազի և հող ուտողի:
- 252ա—257ա. ԸԼԵԵ. Վասն ամենայն ձէթերն և ձեռաց շօխախն և ըշնկի ճաթիւն:
- 257բ—261բ. ԸԼԶԶ. Վասն դաֆաղանի և աղիքն վար էկածի և դոտու էշնի, որ է մօքքորն և նորագիտ մարագի դէղերն:
- 262ա—277բ. ԸԼԷԷ. Վասն ճուարիշներուն և ճուտամ մարագուն և մտպոխքն:
- 278ա—279բ. ԸԼԸԸ. Վասն յերեսն եղած մարագներն և նստատեղոյն:
- 280ա—283բ. ԸԼԹԹ. Վասն ճիւրիսի և նանէ մեճունի և նշանք պատրուոյի և նուաղելոյ և ներբանքն և կրունքն ճղքածի, այլ և նստատեղոյն:
- 284ա—290բ. ԸԾ. Վասն ամենայն շարապներուն:
- 291աբ. ԸԾԱ. Վասն որդնացաւի:
- 292ա—294ա. ԸԾԲ. Վասն չար խոցի և չպանի:
- 294ա—298բ. ԸԾԳ. Վասն պորտ ընկնիւն և պորտի պոտուն և պէլսոյիսին և պատրուոյն և ամենայն հոկնայներն, որ է հոխնայ:
- 299ա—300ա. ԸԾԴ. Վասն դոմի ջրի և շարդածի:
- 300բ—303բ. ԸԾԵ. Վասն ամենայն ցեղ ջերմի և ամենայն ազգ ջրերն:
- 309ա—313բ. ԸԾԶ. Վասն ռահիմին, որ է յարգանդի ցաւերն:
- 314ա—320բ. ԸԾԷ. Վասն ամենայն սփոֆի և սրանայի և սպեղանիք և վանձիճն շինելիքն, որ է պանիր:
- 321ա—322բ. ԸԾԸ. Վասն վերաբերութեան և վարդք ցաւոց նշանք:
- 323ա—324բ. ԸԾԹ. Վասն սուրթմայի և տմէտ և տավայի միակ մեճունի և տիւաթու դէղ:
- 325աբ. ԸԿ. Վասն րուպայի, որ է հնք:
- 326ա—328բ. ԸԿԱ. Վասն ցեցի, որ է սողունանն:
- 328բ—329ա. ԸԿԲ. Վասն հիւանդին դէղ տալու ժամն ի վերայ ԺԲ կենդանակերպի:
- 330ա—336բ. ԸԿԳ. Վասն փեճգեհր շինելոյ և ամենայն ազգ փորացաւի և մայասուրի և այլ այսպիսի ցաւոց հէպ և մաճուն և դէղորայն:
- 337ա—338բ. ԸԿԴ. Վասն քնի դէղ տղայոց և քէշֆ սովող մաճուններն և քրտնեցնելոյ և քոսի և քամուք շինելոյ խրատք և քթի խոցի և տամախի:
- 339ա—341ա. ԸԿԵ. Վասն օճն, որ մարդոյ փորն մտնէ և օճիկ ցաւոց դէղն և օճի յարկաս շինելն:
- 342ա—352բ. ԸԿԶ. Վասն ամենայն ազգ ֆոսակի ցաւերուն դէղքն:
- 353բ—397ա. ԸԿԷ. Վասն բառի ամենայն դէղոց Ջ լեզուս:

А. О. СААКЯН.—Энциклопедия традиционной армянской медицины (XVIII в.).— В сокровищнице медицинских рукописей Матенадарана им. Маштоца выделяется энциклопедического характера «Лечебник Погоса» (1748), до сих пор малоизученный в арменоведческой и историко-медицинской литературе. В статье впервые дано подробное кодико-логическое описание рукописи Матенадарана № 2739, содержащей этот труд, а также анализ его структуры и содержания. Определяется место «Лечебника Погоса» в средневековой армянской медицинской традиции. На основании изучения памятных записей кодекса представляются новые данные о личности и научно-врачебной деятельности

сти врача Погоса, его учителей и предшественников, о деятельности евдокийской врачебной школы в XVI—XVIII вв., тесно примыкавшей к медицинским центрам Амасии и Себастии, до сих пор остававшиеся в тени.

Благодаря приведенному текстологическому анализу удалось выявить иностранные (труды Галена, Александра Тральского, Ибн Сины) и армянские источники «Лечебника Погоса». Из армянских источников в первую очередь следует отметить энциклопедию средневековой армянской медицины анийского и киликийского периода (X—XIII вв.)—«Лечебник Гагика-Хетума», целые главы из которого включены в труд врача Погоса, а также сочинения выдающегося энциклопедиста XV в. Амирдовлата Амасиаци «Учение медицины» (1459) и XXIII главу первого «Ахрапатина», именуемую также «Таблицеобразным словарем», которые начинают и венчают «Лечебник Погоса». В качестве источника армянской энциклопедии XVIII века удалось обнаружить также труд себастийского врача Буниата Себастиаци (1630) «Книга врачебного искусства». Труды армянских врачей часто приведены без указания имен авторов. Особое значение имеет обнаруженный в «Лечебнике Погоса» новый список книги Буниата, поскольку до сих пор известны лишь 4 рукописных манускрипта, содержащих это произведение. Установлено также, что список книги Буниата в «Лечебнике Погоса» составляет отдельный редакционный вариант вместе с рукописями иностранных собраний, в отличие от Матенадарановского кодекса.

В статье ставятся также вопросы армянской медицинской терминологии XVIII в., выявлены новые тенденции ее развития в сторону усиления латинской терминологии под влиянием новейшей европейской медицины. Анализ редакторской деятельности врача Погоса над «Таблицеобразным словарем» Амирдовлата Амасиаци свидетельствует о дальнейшем обогащении им латинской терминологии и введении в словарь турецких медико-ботанических терминов, для которых им была создана отдельная графа.

Проведенное исследование вопросов традиционной армянской медицины и особенно лекарствоведения и фитотерапии на материале армянской энциклопедии XVIII в. имеет не только чисто историческое, но и практическое значение для современной медицины, которая все чаще обращается к опыту прошлого.